

ՎԱՐԿ ԹԻՎ _____-ARM

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Ծրագիր 2)

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ

և

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ

միջև

ԱՄՍԱԹԻՎ _____

ARM 42417

ԲԱՆԱԿՑՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ առ _____ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ (ԱԶԲ) և ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ («Երևան») միջև:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ

(Ա) Հայաստանի Հանրապետության («Վարկառու») և ԱԶԲ-ի միջև միննույն ամսաթվով կնքված Վարկային համաձայնագրի համաձայն՝ ԱԶԲ-ը համաձայնվել է Վարկառուին տրամադրել վարկ մեկ հարյուր տասներկու միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար դոլարի չափով (112,970,000 ԱՄՆ դոլար)՝ Վարկային համաձայնագրով սահմանված ժամկետներով և պայմաններով, սակայն պայմանով, որ վարկի միջոցները կտրամադրվեն Երևանին և, որ Երևանը կհամաձայնվի ստանձնել սույնով նախատեսված որոշակի պարտավորություններ ԱԶԲ-ի նկատմամբ, և

(Բ) Երևանը, ի նկատի ունենալով ԱԶԲ-ի՝ Վարկառուի հետ Վարկային համաձայնագիր կնքելու հանգամանքը, համաձայնվել է ստանձնել սույնով նախատեսված պարտավորությունները,

ԱՅՍՊԻՍՈՎ, կողմերը համաձայնում են հետևյալի շուրջ.

ՀՈԴՎԱԾ I

Սահմանումներ

Բաժին 1.01. Սույն Ծրագրի համաձայնագրում կիրառվելու դեպքում՝ Վարկային համաձայնագրով և Վարկային կարգերով սահմանված մի շարք եզրույթներ (ինչպես որ սահմանված են) ունեն համապատասխանորեն սահմանված իմաստները, եթե համատեքստով այլ բան չի պահանջվում:

ՀՈԴՎԱԾ II

Հատուկ պարտավորություններ

2.01. (ա) Երևանն իրականացնում է Ծրագիրը պատշաճ պատասխանատվությամբ և արդյունավետությամբ, և կիրառվող տեխնիկական, ֆինանսական, բիզնեսի և զարգացման հիմնավոր գործելակերպերին համապատասխան:

(բ) Ծրագիրն իրականացնելու և Ծրագրի, այդ թվում՝ Ենթաձրագրի օբյեկտների շահագործման ընթացքում, Երևանը կատարում է Վարկային համաձայնագրով

ARM 42417

ԲԱՆԱԿՑՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

նախատեսված բոլոր պարտավորությունները այն չափով, որքանով դրանք կիրառելի են Երևանի նկատմամբ:

Բաժին 2.02. Երևանը պետք է, ըստ անհրաժեշտության, անհապաղ և ԱԶԲ-ի համար ընդունելի ժամկետներում և պայմաններով, ի լրումն Վարկի միջոցների՝ տրամադրի անհրաժեշտ դրամական միջոցներ, օբյեկտներ, ծառայություններ, հող և այլ միջոցներ Ծրագիրն իրականացնելու նպատակով:

Բաժին 2.03. (ա) Ծրագիրն իրականացնելիս՝ Երևանը աշխատանքի կվերցնի ԱԶԲ-ի համար ընդունելի իրավասու և որակյալ խորհրդատուների և կապալառուների՝ ԱԶԲ-ի համար բավարար հանդիսացող ժամկետով և պայմաններով:

(բ) Բացառությամբ այն դեպքերի, եթե այլ կերպ համաձայնեցված չէ ԱԶԲ-ի կողմից, Երևանը կատարում է Վարկային համաձայնագրի ժամանակացույց 4-ի դրույթների համաձայն Վարկի միջոցներից ֆինանսավորվող ծախսերի բոլոր հոդվածների գնումները: ԱԶԲ-ը կարող է մերժել որևէ պայմանագրի ֆինանսավորումը, եթե նշված հոդվածներից որևէ մեկն ըստ էության չի գնվել Վարկառուի և ԱԶԲ-ի միջև համաձայնեցված ընթացակարգերի համաձայն, կամ, եթե տվյալ պայմանագրի պայմանները և ժամկետները չեն բավարարում ԱԶԲ-ին:

Բաժին 2.04. Երևանն իրականացնում է Ծրագիրը՝ ԱԶԲ-ի համար ընդունելի պլանների, նախագծման ստանդարտների, մասնագրերի, աշխատանքների ժամանակացույցերի և շինարարական մեթոդների համաձայն: Երևանը, մշակումից անմիջապես հետո, ԱԶԲ-ին տրամադրում կամ կարգադրում է տրամադրել պլանները, նախագծման ստանդարտները, մասնագրերը, աշխատանքների ժամանակացույցերը, և դրանցում հետագայում արված ցանկացած էական փոփոխությունները՝ ԱԶԲ-ի կողմից ողջամտորեն պահանջվող մանրամասներով:

Բաժին 2.05 (ա) Երևանը ձևակերպում և պատասխանատու ապահովագրողների հետ պահպանում կամ կատարում է ԱԶԲ-ին բավարարող այլ կարգավորումներ Ծրագրի օբյեկտների, այդ թվում՝ Ենթածրագրային օբյեկտների ապահովագրման մասով, ինչն արվում է այն չափով և այնպիսի ռիսկերի նկատմամբ, և այն գումարների շրջանակում, որոնք համապատասխանում են հիմնավոր գործելակերպին:

(բ) Առանց վերոնշյալի ընդհանրականության սահմանափակման՝ Երևանը պարտավորվում է ապահովագրել կամ կարգադրում է ապահովագրել Ծրագրի համար ներմուծվող Ապրանքները դրանց ձեռքբերման, դեպի օգտագործման կամ տեղադրման վայր տեղափոխման և առաքման հետ կապված վտանգներից, և նման ապահովագրման մասով ցանկացած փոխհատուցում պետք է վճարվի այնպիսի արժույթով, որն ազատորեն օգտագործվում է նման Ապրանքների փոխարինման կամ վերանորոգման համար:

ARM 42417

ԲԱՆԱԿՑՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Բաժին 2.06. Երևանը պետք է վարի կամ կարգադրում է վարել Վարկի միջոցներից ֆինանսավորվող ծախսային հողվածների որոշարկման համար համապատասխան գրառումներ և հաշիվներ՝ Ծրագրում դրանց օգտագործումը ցույց տալու, Ծրագրի առաջընթացն արձանագրելու (ներառյալ դրա ծախսերը), և սեփական գործառնությունները և ֆինանսական վիճակը՝ հետևողականորեն պահպանվող հաշվապահական հիմնավոր սկզբունքների համաձայն արտացոլելու նպատակով:

Բաժին 2.07. (ա) ԱԶԲ-ը և Երևանը լիարժեքորեն համագործակցում են՝ Վարկի նպատակների իրականացումն ապահովելու նպատակով:

(բ) Երևանը անհապաղ տեղեկացնում է ԱԶԲ-ին ցանկացած այնպիսի վիճակի մասին, որը խոչընդոտում կամ սպառնում է խոչընդոտել Ծրագրի առաջընթացին, Ծրագրի համաձայնագրով նախատեսված՝ սեփական պարտավորությունների կատարմանը կամ Վարկի նպատակների իրականացմանը:

(գ) Կողմերից մեկի պահանջով՝ ԱԶԲ-ը և Երևանը պետք է ժամանակ առ ժամանակ իրենց ներկայացուցիչների միջոցով տեսակետներ փոխանակեն Ծրագրին, Երևանին և Վարկին առնչվող ցանկացած խնդրի առնչությամբ:

Բաժին 2.08 (ա) Երևանը ԱԶԲ-ին տրամադրում է բոլոր այն հաշվետվությունները և տեղեկատվությունը, որ ԱԶԲ-ը ողջամտորեն պահանջում է հետևյալի վերաբերյալ. (i) Վարկը և դրա միջոցների ծախսերը, (ii) նշված միջոցներից ֆինանսավորվող ծախսային հողվածները, (iii) Ծրագիրը, (iv) Երևանի վարչարարությունը, գործառնությունները և ֆինանսական վիճակը և (v) Վարկի նպատակներին առնչվող ցանկացած այլ խնդիրներ:

(բ) Առանց վերոնշյալի ընդհանրականությունը սահմանափակելու՝ Երևանը ԱԶԲ-ին ներկայացնում է պարբերական հաշվետվություններ Ծրագրի կատարողականի, և Ծրագրի օբյեկտների, ներառյալ՝ Ենթածրագրերի օբյեկտների շահագործման և կառավարման վերաբերյալ: Այդ հաշվետվությունները ներկայացվում են է ԱԶԲ-ի կողմից ողջամտորեն պահանջվող ձևով և մանրակրկտությամբ, և ժամկետներում, և պետք է, ի թիվս այլոց, նշեն ուսումնասիրվող ժամանակահատվածում գրանցված առաջընթացի և առաջացած խնդիրների, նշված հիմնախնդիրների լուծման համար ձեռնարկված կամ առաջարկվող քայլերի, և առաջարկվող գործողությունների ծրագրի և հաջորդ ժամանակաշրջանում ակնկալվող առաջընթացի մասին:

(գ) Ծրագրի ֆիզիկական ավարտից անմիջապես հետո, սակայն ամեն դեպքում ոչ ավելի ուշ, քան 3 ամիս հետո կամ այդ նպատակով ԱԶԲ-ի հետ համաձայնեցված ավելի ուշ ժամկետում, ԱԶԲ-ի կողմից հիմնավորված կերպով պահանջվող ձևով և մանրամասներով Երևանը կպատրաստի և ԱԶԲ-ին կներկայացնի Ծրագրի կատարման և նախնական գործառնության վերաբերյալ հաշվետվություն, ներառյալ՝ դրա ծախսերը, Երևանի կողմից

ARM 42417

ԲԱՆԱԿՑՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

սույն Ծրագրի համաձայնագրով սահմանված պարտականությունների կատարողականը և Վարկի նպատակների իրականացումը:

Բաժին 2.09. (ա) Երևանը պետք է (i) վարի առանձին հաշիվներ և գրառումներ Ծրագրի և յուրաքանչյուր Ենթածրագրի մասով, (ii) կազմի տարեկան ֆինանսական հաշվետվություններ Ծրագրի և յուրաքանչյուր Ենթածրագրի մասով՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական սկրունքների համաձայն, (iii) ունենա Ծրագրի և յուրաքանչյուր Ենթածրագրի մասով այնպիսի ֆինանսական հաշվետվություններ, որոնք տարեկան կտրվածքով ենթարկվում են աուդիտի ԱԶԲ-ի համար ընդունելի որակավորում, փորձ և տեխնիկական առաջարդանք ունեցող անկախ աուդիտորների կողմից՝ համաձայն աուդիտի միջազգային ստանդարտների կամ ԱԶԲ-ի համար ընդունելի ազգային համարժեքի, (iv) որպես յուրաքանչյուր նման աուդիտի մաս, ապահովի, որպեսզի աուդիտորները կազմեն հաշվետվություն (որը ներառում է աուդիտորների կարծիքը ֆինանսական հաշվետվությունների, Վարկային միջոցների օգտագործման, ինչպես նաև առհաշիվ գումարի (ներքի) ընթացակարգերի օգտագործման և ծախսերի հաշվետվությունների վերաբերյալ) և նամակ ղեկավարությանը (որը նախատեսում է, ըստ իրավիճակի, աուդիտի ընթացքում վերհանված՝ Ծրագրի կամ Ենթածրագրի ներքին հսկողության թերությունները, եթե այդպիսիք կան), և (v) ոչ ուշ, քան համապատասխան ֆինանսական տարվա ավարտից 6 ամիս հետո ԱԶԲ-ին տրամադրի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների, աուդիտի վերաբերյալ հաշվետվության և ղեկավարությանը հասցեագրված նամակի պատճեններ, բոլորը՝ անգլերեն լեզվով, և այդ փաստաթղթերին և դրանց աուդիտին առնչվող ցանկացած այլ տեղեկատվություն, որ ԱԶԲ-ը ողջամտորեն կպահանջի ժամանակ առ ժամանակ:

(բ) ԱԶԲ-ը պետք է ըստ իրավիճակի հրապարակի Ծրագրի կամ Ենթածրագրի՝ աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, և աուդիտորների կարծիքը ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ դրանց ստացումից հետո 30 օրվա ընթացքում ԱԶԲ-ի վեբ կայքում դրանք տեղադրելու միջոցով:

(գ) Վերը ներկայացված (ա) ենթաբաժնով նախատեսված աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից բացի, Երևանը պետք է (i) տրամադրի իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնք կազմված են ԱԶԲ-ի համար ընդունելի՝ կուտակային հիմունքներով ազգային ֆինանսական հաշվետվության ստանդարտների համաձայն, (ii) աուդիտի ենթարկի իր ֆինանսական հաշվետվությունները տարեկան կտրվածքով ԱԶԲ-ի համար ընդունելի որակավորումներ, փորձ և տեխնիկական առաջարդանք ունեցող անկախ աուդիտորների կողմից՝ համաձայն աուդիտի միջազգային ստանդարտների կամ ԱԶԲ-ի համար ընդունելի ազգային համարժեքի, և, (iii) ոչ ուշ, քան համապատասխան մարմնի կողմից հաստատումից 1 ամիս հետո ԱԶԲ-ին տրամադրի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների պատճենները անգլերեն լեզվով, և այդ փաստաթղթերին

ARM 42417

և դրանց աուդիտին առնչվող ցանկացած այլ տեղեկատվություն, որ ԱԶԲ-ը ողջամտորեն կպահանջի ժամանակ առ ժամանակ:

(դ) ԱԶԲ-ի պահանջով՝ Երևանը պետք է ԱԶԲ-ին հնարավորություն տա Երևանի կողմից վերոնշյալ (ա) (iii) և (գ) ենթաբաժինների համաձայն նշանակված աուդիտորների հետ քննարկել Ծրագրի, Ենթաձրագրի և Երևանի ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Երևանի Ֆինանսական գործերը, եթե դրանք վերաբերում են Ծրագրին և Ենթաձրագրին, և լիազորում աուդիտորների ցանկացած ներկայացուցչի և պահանջում նրանից մասնակցել ԱԶԲ-ի կողմից պահանջված ցանկացած նման քննարկմանը: Նախատեսվում է, որ նման քննարկումները կկատարվեն միայն Երևանի լիազորված պաշտոնյայի ներկայությամբ, եթե Երևանն այլ համաձայնության չի եկել:

Բաժին 2.10 Երևանը հնարավորություն է տալիս ԱԶԲ-ի ներկայացուցիչներին ստուգել Ծրագիրը, Ենթաձրագրերը, Ապրանքները և Աշխատանքները, ինչպես նաև՝ ցանկացած այլ համապատասխան գրառումներ և փաստաթղթեր:

Բաժին 2.11 (ա) Երևանը, ըստ անհրաժեշտության, անհապաղ ձեռնարկում է իր լիազորությունների շրջանակում բոլոր գործողությունները իր իրավաբանական անձի կարգավիճակի պահպանման, սեփական գործառնությունների կատարման, և Ծրագրի իրականացման կամ սեփական գործառնությունների կատարման համար անհրաժեշտ բոլոր իրավունքների, սեփականությունների, արտոնությունների և ֆրենչայզների ձեռքբերման, պահպանման և երկարացման նպատակով:

(բ) Բոլոր դեպքերում Երևանը կատարում է իր գործառնությունները համաձայն խստորեն կիրառելի տեխնիկական, ֆինանսական, բիզնեսի, զարգացման և գործառնական գործելակերպերի, և իրավասու և փորձառու ղեկավարների և աշխատակազմի վերահսկողության ներքո:

(գ) Բոլոր դեպքերում Երևանը պետք է գործարկի և պահպանի իր գործարանները, սարքավորումները և այլ գույքը, և ժամանակ առ ժամանակ, ըստ անհրաժեշտության՝ ողջամիտ ժամկետներում կատարի դրանց մասով բոլոր անհրաժեշտ վերանորոգումները և նորացումները, բոլորը՝ համաձայն կիրառվող տեխնիկական, ֆինանսական, բիզնեսի, զարգացման, շահագործման և պահպանման հիմնավոր գործելակերպերի:

Բաժին 2.12 Բացառությամբ ԱԶԲ-ի հետ այլ կերպ համաձայնեցված դեպքերի, Երևանը չպետք է վաճառի, վարձակալության հանձնի, կամ այլ կերպ տնօրինի իր որևէ ակտիվ, ինչն անհրաժեշտ է իր գործառնությունների արդյունավետ իրականացման համար կամ որոնց տնօրինումը կարող է վնաս հասցնել սույն Ծրագրի համաձայնագրով նախատեսված իր որևէ պարտավորության բավարար կատարման կարողությանը:

ARM 42417

ԲԱՆԱԿՑՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Բաժին 2.13 Բացառությամբ ԱԶԲ-ի հետ այլ կերպ համաձայնեցված դեպքերի, Երևանը կիրառում է Վարկի միջոցները Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ համաձայն Վարկային համաձայնագրի և սույն Ծրագրի համաձայնագրի դրույթների, և ապահովում է, որպեսզի նշված միջոցներից ֆինանսավորվող բոլոր ծախսային հոդվածներն օգտագործվեն բացառապես սույն Ծրագրի իրականացման նպատակով:

Բաժին 2.15 Երևանը պետք է անհապաղ տեղեկացնի ԱԶԲ-ին իր գործառույթների և լիազորության մասով որևէ դրույթի փոփոխման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու ցանկացած առաջարկի մասին, որը, իրականացվելու դեպքում, կարող է ազդել Ծրագրի վրա: Երևանը ԱԶԲ-ին ընձեռում է այդպիսի առաջարկի մասով դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու համապատասխան հնարավորություն նախքան այդ մասով որևէ դրական գործողություն ձեռնարկելը:

2.16 Երևանը պետք է ապահովի, որպեսզի 2016-2019 թ.թ. ժամանակահատվածում ամեն տարի Երևանի ճանապարհային և քաղաքային տրանսպորտի պահպանման փաստացի բյուջեն՝ աճի այնպես, որ 2019 թ. վերջին այդ ամբողջ աճը չլինի ավելի պակաս, քան Պահանջվող ճանապարհների և քաղաքային տրանսպորտի պահպանման բյուջեի աճն է:

ՀՈՂՎԱԾ III

Գործողության ժամկետ. Դադարեցում

Բաժին 3.01 Սույն Ծրագրի համաձայնագիրը ուժի և գործողության մեջ է մտնում Վարկային համաձայնագրի ուժի և գործողության մեջ մտնելու օրվանից: ԱԶԲ-ն այդ օրվա մասին անհապաղ տեղեկացնում է Երևանին:

Բաժին 3.02 (ա) Սույն Ծրագրի համաձայնագիրը և կողմերի՝ սույնով նախատեսված բոլոր պարտավորությունները դադարում են մինչև հետևյալ երկու ամսաթվերը.

Վարկային համաձայնագրի դադարեցման օրը՝ համաձայն դրա պայմանների, կամ

Սույն Ծրագրի համաձայնագրի օրվա 10-ամյա ժամկետին:

(բ) Եթե Վարկային համաձայնագրի գործողությունը դադարում է իր պայմաններին համաձայն՝ վերը նշված (ա)(ii)-րդ ենթակտով սահմանված օրվանից ավելի վաղ, ապա ԱԶԲ-ը պետք է անհապաղ այդ մասին տեղեկացնի Երևանին:

Բաժին 3.03. Սույն Ծրագրի համաձայնագրի բոլոր դրույթները շարունակելու են պահպանել իրենց ուժը և գործողությունը անկախ Վարկային համաձայնագրով նախատեսված որևէ չեղարկման կամ կասեցման:

ՀՈՂՎԱԾ IV

Այլ դրույթներ

Բաժին 4.01 Սույն Ծրագրի համաձայնագրով պահանջվող կամ թույլատրվող ցանկացած ծանուցման կամ պահանջի ներկայացում կամ կատարում, և սույն Ծրագրի համաձայնագրով նախատեսված՝ կողմերի միջև ցանկացած պայմանավորվածություն պետք է կատարվի գրավոր ձևով: Նման ծանուցումը կամ պահանջը տրված կամ կատարված է համարվում, եթե այն հանձնվում է առձեռն, փոստով կամ ֆաքսով այն կողմին, որին պահանջվում կամ թույլատրվում է այն հանձնել կամ կատարել ստորև նշված հասցեին, կամ այլ հասցեի, որը տվյալ կողմը ծանուցմամբ պետք է նշած լինի ծանուցում տվող կամ նման պահանջ ներկայացնող կողմին: Հասցեները հետևյալն են.

ԱԶԲ

**Asian Development Bank
6 ADB Avenue
Mandaluyong City
1550 Metro Manila
Philippines)**

Ֆաքսի համարներ.

(632) 636-2444

(632) 636-2484

Երևան

**Արգիշտի փողոց 1,
Երևան, Հայաստան**

Ֆաքս.

(374 60) 544306

Բաժին 4.02 (ա) Ցանկացած գործողություն, որ պահանջվում կամ թույլատրվում է ձեռնարկել, և ցանկացած փաստաթուղթ, որ պահանջվում կամ թույլատրվում է ի կատար ածել, սույն Ծրագրի համաձայնագրի կամ Վարկային համաձայնագրի Բաժին 6.01-ի

ARM 42417

ԲԱՆԱԿՑՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

համաձայն կամ ի դեմս Երևանի կարող է ձեռնարկվել կամ ի կատար ածվել Երևանի քաղաքապետի, կամ այլ անձի կամ անձանց կողմից, ով /ովքեր/ կնշանակվի /են/ նրա կողմից՝ այդ մասին գրավոր ծանուցելով ԱԶԲ-ին:

(բ) Երևանը ԱԶԲ-ին տրամադրում է վերոնշյալ (ա) ենթակետի համաձայն գործող յուրաքանչյուր անձի լիազորության բավարար ապացույցներ՝ յուրաքանչյուր նման անձի վավերացված ստորագրության նմուշի հետ միասին:

Բաժին 4.03 Սույն Ծրագրի համաձայնգրի համաձայն պարտականությունների չկատարման դեպքում կողմերից յուրաքանչյուրի համար ծագող որևէ իրավունքի, լիազորության կամ իրավական պաշտպանության միջոցի իրականացման ուշացումը կամ չիրականացումը չպետք է սահմանափակի այդ իրավունքը, լիազորությունը կամ իրավական պաշտպանության միջոցը կամ մեկնաբանվի որպես դրանցից հրաժարում կամ զիջում պարտավորությունների չկատարման համար. ո՛չ էլ տվյալ կողմի գործողությունը պարտականությունների չկատարման կամ զիջումը պարտականությունների չկատարման մասով կազդի տվյալ կողմի որևէ իրավունքի, լիազորության կամ իրավական պաշտպանության միջոցի վրա կամ կսահմանափակի դրանք մեկ այլ կամ հաջորդ չկատարման առնչությամբ:

ՎԵՐՈՉԳՅԱԼԻ ՀԱՎԱՍՏՄԱՄԲ՝ կողմերը՝ գործելով իրենց պատշաճորեն լիազորված ներկայացուցիչների միջոցով վերը նշված ամսաթվով ստորագրում են այս Ծրագրի համաձայնագիրը և ապահովում դրա հանձնումը ԱԶԲ-ի գլխամասային գրասենյակ:

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿ

_____ կողմից

[Անուն, պաշտոն]

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

_____ կողմից

[Անուն, պաշտոն]

ARM 42417

ԲԱՆԱԿՑՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ